ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղրղզստանի Հանրապետության կառավարության միջև ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղրղզստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

տնտեսական և առևտրական հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացման նպատակով,

ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում ցուցաբերելով համագործակցություն զարգացնելու ձգտում, ելնելով միջազգային կազմակերպություններում ընդունված սկզբունքներից և նորմերից,

ղեկավարվելով երկու Կողմերի տնտեսական շահերով, երկու պետություններում գործող օրենսդրության շրջանակներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավաստագրման վերաբերյալ իրենց երկրներում գործող պետական համակարգերը:

Կողմերը՝

միմյանց անվճար տրամադրում են տեղեկություն և նորմատիվ փաստաթղթեր (ստանդարտների և տեխնիկական պայմանների տեղեկատուներ, տեղեկագրեր, հանդեսներ, ստանդարտներ և ստանդարտացման, չափագիտության ու հավաստագրման վերաբերյալ այլ նորմատիվ փաստաթղթեր) երկու օրինակից՝ ըստ ԱՊՀ շրջանակներում գործող Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման միջպետական խորհրդի որոշումների, բազմացնելու, պատճենահանելու և, լրացուցիչ համաձայնեցված պայմանով, Կողմերի տարածքում իրացնելու իրավունքով,

Կողմերի միջև համաձայնեցված կարգով փոխադարձաբար ճանաչում են չափման միջոցների պետական փորձարկումների, տեսակի հաստատման, ստուգաչափման և չափագիտական վկայագրման արդյունքները և այն կազմակերպությունները, որոնք կատարում են ստուգաչափման և փորձարկման լաբորատորիաների և կենտրոնների հավատարմագրում, ինչպես նաև նրանց կողմից հավատարմագրված

լաբորատորիաները և կենտրոնները, որոնք իրականացնում են չափման միջոցների ստուգաչափում, փորձարկումներ և ստուգաճշտում,

ճանաչում են մյուս Կողմի հավաստագրման մարմինները, հավատարմագրված փորձարկող լաբորատորիաները և կենտրոնները, փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի համապատասխանության հավաստագրերը և նշանները՝ լրացուցիչ համաձայնեցված պայմանով: Արտադրանքի անվտանգության համար պատասխանատու է այն պատրաստողը, իսկ համապատասխանության հավաստագրերի հավաստիության համար՝ հավաստագիրը տվող մարմինը,

ճանաչում են Կողմերի ճանաչմանն արժանացած հավաստագրման միջազգային, տարածաշրջանային և ազգային համակարգերում փորձագետներին տրված հավաստագրերը,

կիրառում են մյուս Կողմի ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման նորմատիվ փաստաթղթերը, եթե դրանց պահանջները չեն հակասում, պետության գործող օրենսդրությանը համապատասխան, ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման մարմնի կողմից գործողության մեջ դրված սահմանված կարգին,

միմյանց իրավունք են տալիս ամբողջությամբ կամ մասնակիորեն իրենց ազգային նորմատիվ փաստաթղթերում և նորմատիվ փաստաթղթերի տեղեկատուներում ընդգրկել մյուս Կողմի նորմատիվ փաստաթղթերը և նորմատիվ փաստաթղթերի տեղեկատուները՝ փոխհամաձայնեցված պայմանով:

Հոդված 2

Կողմերը միմյանց միջև համագործակցությունն իրականացնում են համաձայնագրերի, արձանագրությունների և ծրագրերի հիման վրա, որոնք նախատեսում են՝

կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում,

ֆիզիկական մեծությունների միավորների ազգային չափանմուշների և ելակետային նմուշային չափման միջոցների ստեղծում, կատարելագործում և համեմատում,

նյութի և նյութերի բաղադրությունների և հատկությունների, ստանդարտ նմուշների, ինչպես նաև նյութի և նյութերի ֆիզիկական հաստատունների և հատկությունների մասին ստանդարտ ինֆորմացիայի ստեղծում և օգտագործում,

հավաստագրման պետական համակարգերի հետագա զարգացում, կատարելագործում և ներդաշնակեցում,

ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում տեղեկատվական գործունեության զարգացում:

Հոդված 3

Կողմերը կաջակցեն միմյանց ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում միջազգային կազմակերպություններին, որոնց անդամ է Կողմերից մեկը, անդամագրվելու և այդ կազմակերպություններում աշխատանքներ կատարելու հարցերում:

Հոդված 4

Կողմերն ապահովում են ստացվող փաստաթղթերի և սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող աշխատանքների և ստացված գիտատեխնիկական արդյունքների մասին տեղեկության գաղտնիությունը, եթե փոխանցող Կողմը նշում է դրանց գաղտնիության մասին:

Հոդված 5

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ազատ օգտագործել համագործակցության ընթացքում ստացած գիտատեխնիկական տեղեկությունը, եթե մյուս Կողմը չի նշել դրա գաղտնիության մասին, այդ տեղեկությունը կարող է փոխանցել երրորդ պետության միայն այն տրամադրող Կողմի համաձայնությամբ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների համակարգումը և իրագործումը հանձնարարվում է՝

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վարչությանը,

Ղրղզստանի Հանրապետությունում՝ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման և չափագիտության պետական տեսչությանը:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթներն անհրաժեշտության դեպքում կոնկրետացվում են Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վարչության և Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման և

չափագիտության պետական տեսչության միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերով և արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ պետությունների և նրանց կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերից բխող իրավունքները և պարտականությունները:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը կլուծվեն փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով՝ տարբեր մակարդակներով:

Հոդված 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար Կողմերի օրենսդրությամբ նախատեսված բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին գրավոր տեղեկացնելով իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի կողմից այդ ծանուցումը ստացվելուց 6 ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի ապրիլի 21-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի դեկտեմբերի 3-ից: